ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Ն. Զարյան 27, հեռ. (+374 11) 518 201, էլ. փոստ՝ arabkir@yerevan.am

№25/01-25/26099 «29» 12 2020թ.

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի
/վերանվանված «Արմ Լյուքս» ՍՊԸ/
տնօրեն՝ Ա.Կիրակոսյանին
քաղաք Երևան, Հալաբյան 59

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի /վերանվանված «Արմ Լյուքս» ՍՊԸ/ միջև 19.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուին պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 10.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

19.02.2020թ. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի թիվ 25/01-25/3170 գրությամբ տեղեկացվել է Ձեզ, մինչև 02.03.2020թ. ներկայանալ աշխատակազմ՝ միջոցառման անցկացման վայրը, ծրագիրը և ճաշացանկը համաձայնեցնելու համար:

03.03.2020թ. Ձեր կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում կանացվող միջոցառման համար պարզաբանումներ ստանալու նպատակով:

Ի պատասխան գրության՝ էլեկտրոնային հասցեով ուղարկվել են մեր առաջարկությունները: Այս ամենից հետո Ձեր կողմից ոչ մի առաջարկ չի եղել և միջոցառումը /Կանանց միջազգային օր/ չի կայացել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ «Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ/ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, ամբողջովին հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

կատ. Գ.Հովհաննիսյան
հեռ.011-518-151